

Քեթևան Գոչիտաշվիլի

Թբիլիսիի Իվանե Ջավախիշվիլիի անվան պետական համալսարանի հումանիտար գիտությունների ֆակուլտետ:

ԵՐԿԼԵԶՈՒ ԿՐԹՈՒԹՅՈՒՆՆ ԱՆՀԱՏԻ ԲԱԶՄԱՄՇԱԿՈՒՅԹ ԴԱՍՏԻԱՐԱԿԵԼՈՒ ԳՈՐԾԻՔ

«Լինել երկլեզվային նշանակում է լինել փոփոխությունների գործընթացի համամասնակից: Լինել երկլեզվային չի նշանակում միայն այն, որ տիրապետես երկու լեզուների, սա նշանակում է ապրես երկու լեզուների մեջ, երկու աշխարհում, շարժվես տարբեր տարածքներում՝ ունենաա լայն մտահորիզոն, ընկալես աշխարհը տարբեր հեռանկարներից»:

Անտոնիո դե Քունիա Դուարտե Ջուստո

Երկլեզու կրթության, որպես բազմաշակույթ հասարակության մեջ սպասելի հակադրությունների հաղթահարման և մարդու բազմաշակութային դաստիարակելու հնարավորության, անհրաժեշտությունը ծագել է այնպիսի երկրներում (Կանադա, Բելգիա, Շվեյցարիա), որտեղ բնականից գոյություն ունի երկլեզու միջավայր: Թեպետ, բացի վերոնշյալ երկրներից, երկլեզու կրթությունն ընդունված է նաև այնպիսի երկրներում, որտեղ գոյություն ունի հասարակության պահանջմունք դեպի ինտեգրում, մշակույթների երկխոսություն և միջմշակութային հաղորդակցություն (օրինակ՝ Գերմանիայում): (Ա.Շ.Գլեբովիչ, Билингвальное Образование в отечественной и зарубежной педагогике, Автореферат Диссертации, 2007): Գոյություն ունի ևս մեկ, բավականին մեծ խումբ հասարակության, որի համար երկլեզու կրթությունն ուղի է, մի կողմից՝

ինքնանույնականացման պահպանման, մյուս կողմից՝ երկրի դոմինանտ, հիմնական մշակույթի մեջ լիարժեք ընդգրկման: Այս տեսակետից նմուշային են Ամերիկայի Միացյալ Նահանգներում գործող երկլեզու կրթության ծրագրերը, որոնք սկիզբ են առնում դեռ 1600-ական թվականներին, իսկ 1968 թվականի ձևակերպվեց Դաշնային օրենք երկլեզու կրթության մասին: Երկլեզու կրթական ծրագրերի նպատակն է էմիգրանտներին այնպիսի կրթական ծրագրեր առաջարկել, որոնք ԱՄՆ ապրելու տեղափոխված բնակիչներին ի վերջո չեն հասցնի լրիվ ձուլման: Չնայած տարբեր ժամանակներում առկա օբյեկտիվ պատճառներից բխող դիմակայություններին (օրինակ՝ գերմաներեն-անգլալեզու երկլեզու դպրոցների արգելումն Առաջին համաշխարհային պատերազմի ժամանակ, գերմաներենի նկատմամբ ծագած ագրեսիայի պատճառով)՝ ներկայիս դրությամբ երկլեզու ծրագրերը կրկին

գործում են (Robert Trifiletti. Office of Bilingual Education and Minority Language Affairs: Foreign Visitor's Ambassador Booklet, 1998.):

Վրաստանի որոշ տարածաշրջաններում մինչև օրս գոյություն ունի համարյա չվճարված հիմնախնդիր, որ մեր քաղաքացիների մի նշանակալի մասն (հիմնականում, ոչ վրացալեզու փոքրամասնությունների ներկայացուցիչներ), ինտեգրվի, մի կողմից՝ երկրի ազգային մեծամասնությանը (ծրագիր միմիմում) և, մյուս կողմից, զինվի այն կարողություններով, որոնք նրան կտան նաև միջազգային ինտեգրման հնարավորություն (ծրագիր մաքսիմում), այնպես, որ պահպանի, չկորցնի նույնականությունը և սեփական մշակույթի ինքնատիպությունը:

Ինչպես տեսնում ենք, հասարակության ոչ այնքան փոքր մասի առջև ծառայած խնդիրը բավականին բարդ է և պահանջում է կրթական քաղաքականության պատասխանատուների, մասնագետների և հասարակության փոխամագործակցություն և, որ ամենակարևորն է, ռացիոնալ, պլանաչափ և գիտական մոտեցում:

Ցանկացած երկրում ազգային (պետական) լեզվի տիրապետումը պետք է պարտադիր լինի, թեպետ, ինչպես նշեցինք, մեր իրականությունը, ցավոք այլ պատկեր է տալիս: Չպետք է լինի վիճելի, որ պետական լեզվի չիմացությունը ցանկացած մարդու դնում է պարտված դիրքի մեջ: Սրա կարևորագույն պատճառն այն է, որ լեզվին չտիրապետողները չեն կարող տեղեկություն ստանալ՝ նրանք չեն հասկանում լսածը և չեն կարող հասկանալ կարդացածը, բացի այն դեպքերից, երբ նրանց մոտենում են նպատակային, նրանց համար ստեղծում են իբր գրուցելու պայմաններ և նրանց հետ խոսում են նրանց հետ հասկանալի (հաճախ որևէ օտար) լեզվով, չեն կարող ձևավորել և դրսևորել իրենց դիրքորոշումը մեծամասնության համար հասկանալի (որպես օրենք, պետական) լեզվով: Բնական է, գոյություն ունի մեծ հավանականություն, որ այսպիսի մոտեցումն առաջացնի հասարակությունից

լեզուներ չիմացողների դուրսնում և նույնիսկ մեկուսացում:

Մասնագետները համարում են, որ օտար լեզվի՝ *lingua franca*-ի, կիրառումը հնարավոր է հիմնականում բավարարի հիմնական տրանզակցիոն մոտեցումները, սակայն մշակութային հաղորդակցության շրջանակներում, մարդու կյանքի խորքային ասպեկտների հետ հարաբերության մեջ, այլ պատկեր է ստեղծվում նույնիսկ այն ժամանակ, երբ կապը հաստատվում է երկու կողմերի համար ծանոթ լեզվով, հաղորդակցության որակը սահմանվում է, ելնելով գրուցակցների լեզվական իրազեկությունից, այսպիսով, սահմանափակված է և չի կարող լիարժեք լինել:

XIX դարի վերջին մի անգլիացի պրոֆեսոր պնդում էր. «Սարսափելի կլինեք, եթե երեխան հնարավորություն ունենար միանման գիտենալ երկու լեզու, որովհետև այսպիսի երեխայի ինտելեկտուալ և հոգևոր զարգացումը կընթանար ոչ թե երկու անգամ արագ, այլ երկու անգամ ավելի դանդաղ: Տվյալ հանգամանքներում մտավոր զարգացման ձևավորումը և բնույթի ձևակերպումը բավականին կխափանվեր»: Միևնույն ժամանակ, ազգային քաղաքականության առաջատար գաղափարախոսությունը համարում էր, որ ազգային սահմանները բնականորեն համընկնում են միալեզու լեզվական տարածքներին՝ երկու ազգություն կրելը կասկած էր հարուցում: Երկլեզուները համարվում էին պոտենցիալ դավաճաններ: Ցանկացած մարդ, որը պատկանում էր երկու կամ ավելի մշակույթների, չպետք է լինեք վստահելի, քանի որ ելակետ էր համարվում այն դրույթը, որ մարդ միալեզու պետք է լինեք, իսկ բազմալեզվությունը համարվում էր Աստծո պատիժ, որը մարդկությանը հետևում է Բաբելոնյան աշտարակաշինության ժամանակվանից (Տես՝ Պաղարայգ Օ. Ռ-այդեն, Ջորջ Լիոդ, Երկլեզու կրթություն՝ հիմնական ռազմավարական խնդիրներ, Թբիլիսի, 2007):

Մեր ժամանակներում այս մոտեցումը նշանակալիորեն փոխված է: Երկլեզու

կրթությունն այս բնագավառի առաջատար մասնագետների կողմից համարվում է ավանդական միակեզու կրթության այլընտրանքային հեռանկարային ուղղություն: Երկլեզու կրթության բնագավառում հավաքված արևմտյան փորձը տալիս է հնարավորություն, որ դատենք կրթության այս ուղղության առավելությունների մասին:

Երկլեզու կրթությունը ենթադրում է, մի կողմից՝ ուսումնական գործընթացի այնպիսի կազմակերպում, երբ հնարավոր է որպես ուսուցման լեզու կիրառել երկու լեզու (օրինակ՝ թուրքական էթնիկական փոքրամասնության լեզուն Ավստրիայում կամ գերմաներենը, որպես երկրորդ լեզու՝ Ռուսաստանում, անգլերենը՝ վրացական կրթական տարածքում): Այսպիսով, երկրորդ լեզուն դառնում է ոչ միայն սովորելու օբյեկտ, այլ նաև հարաբերության միջոց և ուսուցման լեզու, իսկ մյուս կողմից՝ երկլեզու կրթությունը ենթադրում է մայրենի և համաշխարհային արժեքների ճանաչում մայրենի և օտար լեզվի միջոցով, երբ օտար լեզուն դառնում է միջոց, զենք աշխարհի տարբեր երկրների և ժողովուրդների պատմա-մշակութային և սոցիալական փորձի ճանաչման:

Երկլեզու կրթության կարևորագույն գերակայություններից մեկն այն է, որ այն աշակերտին ապահովում է լեզվական իրազեկության բարձր աստիճանով երկու լեզուներից էլ: Գործնականում, այս դեպքում լեզվի ուսանումը փակված, միայն արդյունքին կողմնորոշված գործընթաց չէ, այլ հիմք է դրվում ապագայում նրա՝ առանց խափանման կարողությանը և, քանի որ հաղորդակցական հմտություն-կարողությունների հետ (հենց այս կարողություններին է կողմնորոշված օտար լեզվի ուսանումը միակեզու կրթական համակարգում ժամանակակից մոտեցումով), աշակերտն այնպես է պատրաստված, որ կիրառի այն համատեքստային պահանջին համապատասխան ինչպես պատրաստված, այնպես էլ չպլանավորված բանավոր կամ գրավոր հաղորդակցական ակտի պայմաններում:

Այսօր այլևս ոչ ոք չի վիճում, որ լեզվական իրազեկությունը, այլ կարողությունների, հմտությունների և որակավորման հետ, հանդիսանում է մարդու անձնական կապիտալ: Այնպես, ինչպես կապիտալի այլ ձևեր, այն արժեքներ է ձեռք բերում՝ համաձայն շուկայի կոնյուկտուրայի: Այստեղից ելնելով՝ ֆրանսիացի սոցիոլոգ Պյեռ Բերդյեյն ձևավորել է այսօրվա համար տարածված հասկացությունը՝ «Լեզվաբանական (լեզվական) շուկա»: «Լեզվաբանական շուկա» տերմինը կարող ենք բացատրել որպես հարաբերություն լեզվաբանական իրազեկություն ներմուծող լեզվով խոսողների և նրանց միջև, ով սահմանում է այս իրազեկության պահանջը: Անհատների կարողությունը, պահպանել կամ բարձրացնել իրենց սոցիալական դրությունը, սահմանվում է այն կապիտալի ծավալով, որին տիրապետում են նրանք: Խոսողի գործնական իրազեկության մի մաս է հանդիսանում նրա իմացությունը, թե որտեղ և երբ շնորհի այս կամ այն լեզվին առավելություն, որպեսզի առավելագույնս ստանա գործնական օգուտ: Բազմալեզվության դեպքում լեզվաբանական կապիտալի բաշխումը հաճախ հարաբերակցում է կապիտալի այլ ձևերի բաշխման հետ և, միասին վերցված, բոլոր այս ձևերը սահմանում են այս լեզվով խոսող առանձին անհատների և ողջ հասարակության վիճակը և ողջ հասարակության վիճակը սոցիալական ստորակարգության մեջ:

Չնայած դրան, նշանակալի է իմաստավորել այն, որ լեզվի կիրառությունը չի սահմանափակվում միայն տնտեսագիտական հասկացությամբ: Տնտեսագիտական հասկացությունները և տերմինները այստեղ կիրառվում են չափազանցությունների տեսքով, ցույց տալու համար, որ լեզվաբանական փորձը մինչև որոշակի մակարդակ կարող է նկարագրվել տնտեսագիտական տերմիններով: Այստեղից ելնելով՝ երբ անհատն ունի որևէ լեզվի տիրապետման ցանկություն, օգուտը, որ նա կստանա, կարող է ունենալ խորհրդանշական կամ սոցիոմշակութային բնույթ: Ինչպես նկատել է Ֆիշմանը, «Այն լեզուները, որոնք

հարկադրաբար չեն փաթաթված մարդու վզին, պետք է ապահովեն (կամ կապահովեն հետագայում) դեֆիցիտային հնարավորությունների և ռեսուրսների մատչելիություն: Հակառակ դեպքում, ամատական բնակչությանը չի ունենա այս լեզուների կիրառության հիմք ... Այս լեզուները հազվադեպ են տիրապետում միայն հենց այս լեզուների նկատմամբ հետաքրքրության պատճառով»:

Այսպիսով, պարզ է, որ լեզվաբանական շուկայի կառուցվածքը սահմանում է այն, թե որքանով է ընդունելի այս կամ այն լեզուն, և որքանով է անհրաժեշտ այն տվյալ դեպքում: Այստեղից ելնելով, հասարակությունը հատակ պատկերացում պետք է ունենա այսպես կոչված լեզվաբանական շուկայի մասին: Նախատեսի անհատական հետաքրքրությունները, տարածաշրջանի պահանջները և սրա համաձայն անի ընտրություն, թե որ կրթական համակարգին է շնորհել առավելությունը՝ միալեզու, թե երկլեզու, այս ընտրությունը պետք է հիմնվի ընտանիքի և/կամ անհատի կամքի վրա և աջակցություն ստանա պետության, կրթական համակարգի կողմից: Ընդհանրապես, ազգային փոքրամասնությունների ներկայացուցիչների համար ընդունելի է երկլեզու կրթության այնպիսի մոդելը, որը նպաստում է լեզվական բազմերանգությանը, ազգային փոքրամասնությունների կողմից սեփական լեզվի ուսանմանը և պահպանմանը:

Ազգային փոքրամասնությունների լեզուները կրողների զնահատմամբ, նրանց լեզուն իրենց իսկ ազգային պատկանելության ստուգիչն է, սակայն նրանց գործնական կիրառության միջավայրը համեմատաբար սահմանափակ է և սոցիալական հեղինակությունն էլ ոչ այնքան բարձր է: Ծիշտ է, դա կարող է հակասական թվալ, սակայն ամեն ինչ իր տեղն է կանգնում, երբ նկատի ենք ունենում ազգային փոքրամասնությունների լեզուները կրողների սոցիալական վիճակը: Հաճախ որոշ լեզուներ համարվում են ավելի հեղինակավոր՝ նրանց կրողների սոցիալական

կարգավիճակի նախատեսումով: Պետք է հիշենք, որ լեզվի հեղինակությունը, ինչպես դա ցույց է տալիս փորձը, կապված է ոչ թե իր՝ լեզվի հետ, այլ սոցիալական դասի և նրանցով խոսողների կարգավիճակի հետ: Պետական լեզվի տիրապետման հետ միանշանակորեն կապված է սոցիալական հեղինակության ձեռքբերումը:

Երկլեզու կրթության ևս մեկ առավելություն է այն, որ բարձրացնի անհատի սոցիալական հեղինակությունը՝ պետական լեզվի տիրապետման հաշվին՝ հեշտացնելով սոցիալիզացման գործընթացը և բարձրացնելով նրա սոցիոմշակութային իրազեկությունը:

Վրացական իրականության մեջ, իհարկե, կարևորագույն հիմնախնդիրը լեզվական/ազգային փոքրամասնությունների երկլեզու դաստիարակումն է, թեպետ, կարծում ենք, չենք կարողանա շրջանցել վերջին տասնամյակների ընթացքում հաստատված գլոբալ երկլեզվության հարցը, որի բանաձևը հետևյալն է՝ անգլերեն + մայրենի լեզու: Առավել ևս, որ Վրաստանում մի քանի հեղինակավոր միջնակարգ դպրոց և բարձրագույն ուսումնական հաստատություն հենց այս մոդելն են ընտրում և այս կամ այն չափով հաջող: Տվյալ երևույթի տարածմանը նպաստեց ընթացիկ պատմական և տնտեսական գործընթացների զարգացումը, որն անգլերենը դարձրեց հեղինակավոր լեզու աշխարհի համարյա բոլոր անկյուններում, ինչպես լեզվական մեծամասնության, այնպես էլ լեզվական փոքրամասնության ներկայացուցիչների շրջանում:

Գոյություն ունի ևս մեկ մոտեցում՝ մասնավորապես, ծնողների մեծամասնությունը, բացարձակապես տրամաբանորեն և արդարացիորեն համարում են, որ, եթե նրա զավակը դպրոցում համապատասխանաբար սովորի անգլերենը, սա նրա համար հետագայում կհեշտացնի աշխատանքային շուկայում տեղ գտնելը: Սրա նախատեսումով որոշ դպրոցներում գերակա լեզուն (անգլերենը) զբաղեցնում է մայրենի լեզվի տեղը: Օրինակ՝ Շվեյցարիայի որոշ գերմանալեզու

կանտոններում այսօրվա դրությամբ անգլերենն ավելի հեղինակավոր է համարվում, քան այլ պետական լեզուներ: Ծնողները և գործատուները պահանջում են, որ անգլերենի ուսուցումն ավելի ինտենսիվ դառնա, քան ֆրանսերենինը կամ գերմաներենինը: Այսպիսով, անգլերենն արդեն ընտրում են որպես հիմնական, առաջին լեզու բազմալեզու երկրներում, նաև այն տարածաշրջաններում, որտեղ, աշխարհագրական դիրքի պատճառով (գրոսաշրջական, տարանցիկ երկրներում) օտար լեզվի ընտրությունն ավելի հեղինակավոր է: Կարծում ենք, պետք է նախատեսել վտանգներից մեկը, որ կարող է հետևել կրթական տարածքում մի որևէ լեզվին դոմինանտ դիրքի շնորհմանը, մասնավորապես, սա հնարավոր է վատթարացնի այլ, համեմատաբար փոքր լեզուների կարգավիճակը և, ծայրահեղ դեպքում, «փոխի համաշխարհային բնանկարը»: Ավելի կոնկրետ, անգլերեն լեզվին (և/կամ ցանկացած լեզվի, որը մայրենի լեզվին կփոխարինի որոշակի բնագավառներում, որոնք սոցիալական տեսակետից հեղինակավոր են) առավելություն շնորհելուն կարող է հետևել փոքրաքանակ լեզուների ուսուցման և ուսանման հետաքրքրության, կարգավիճակի վատթարացում, և, ի վերջո, նրանցից ոմանց վերացում նույնիսկ: Բնական է, որ այս հարցերի մասին մասնագետների խորհրդատվություն է անհրաժեշտ կրթական հաստատություններին և նաև հասարակությանը, որն ընտրում էր այս մոդելը:

Փոխարենը, հենց պլանավորված երկլեզու ռեժիմի պայմաններում այսպիսի վտանգը ամբողջովին բացառվում է, քանի որ նույնիսկ անհամաչափ երկլեզվության ժամանակ մայրենի լեզվի ուսուցումը գերակա է և ամբողջովին ապահովում է այս լեզվի ռեսուրսների լիարժեքորեն յուրացման հնարավորություն:

Երկլեզու կրթության հայեցակարգը ենթադրում է բազմամշակույթ դաստիարակություն: Երկլեզու կրթություն ստանալիս աշակերտը, երկրորդ լեզվի հետ մեկտեղ, օտար, իր հայրենի մշակույթից տարբեր,

մշակույթի ևս տիրապետում է (այնպես, ինչպես մայրենիի), բարձրանում է նրա ինտերմշակութային իրազեկությունը, այս տիպի կրթության պայմաններում նա դառնում է հանդուրժող այլ մշակույթների, որոշ դեպքերում դավանանքների նկատմամբ, ընդլայնվում է նրա մշակութային տարածքը, ինչն, ի վերջո, օգնում է նրան մշակել բազմամշակութային հասարակությունում հաստատվելու և այլ էթնիկական խմբերի հետ փոխգիշող համագոյակցության հմտություններ, դառնալ սոցիալապես համերաշխ: Էթնիկական փոքրամասնությունների ներկայացուցիչները ստիպված չեն լինում փոխել իրենց մշակութային կողմնորոշումը մեծամասնության հետ լրիվ ինտեգրման համար, երկլեզու կրթությունը նրանց հնարավորություն է տալիս պահպանել մայրենի լեզուն և փոխանցել հետագա սերունդներին և, նաև, լինել բացարձակապես ադեկվատ և պատրաստ դոմինանտ ազգի լեզվի և մշակույթի, սոցիալական մարտահրավերների նկատմամբ:

Երբ խոսում ենք մայրենի լեզվով, բնագոյաբար գիտենք, թե ինչպես հարմարվենք իրավիճակին, խոսողական ակտը վարում ենք նրա համաձայն, թե որքանով ծանոթ մարդու ենք դիմում, ինչ թեմայի շուրջ ենք խոսում և հաղորդակցության որ միջոցն ենք կիրառում (հեռախոս, նամակ, բացիկ և այլն): Օտար լեզվով խոսելիս՝ աշխատում ենք հաղորդակցություն հաստատել սեփական հմտությունները երկրորդ լեզու տեղափոխելով: Այստեղից ելնելով՝ մեր երախտագիտությունն ենք հայտնում կամ ներողություն խնդրում այնպիսի իրավիճակներում, որոնք մեր սեփական մշակույթում պահանջում են շնորհակալություն հայտնել կամ ներողություն խնդրել: Թեպետ, հաճախ այսպիսի վարմունքը օտար մշակույթի շրջանակներում չի մատուցում և նույնիսկ անհասկանալի վիճակ է ստեղծում: Օրինակ՝ իսպանացիները ֆրանսիացիներին երկերեսանի են համարում, քանի որ վերջիններս չափից ավելի հաճախ են ներողություն խնդրում և շնորհակալություն հայտնում, մյուս կողմից՝

Ֆրանսիացիներն իսպանացիներին համարում են անկաշկանդ և նույնիսկ անդաստիարակ, քանի որ նրանք անծանոթներին «դու»-ով են դիմում: Իրականում, իսպանացիներն ուղղակի, շփվելիս կիրառում են հարաբերության սեփական կանոնները, ինչն անսովոր է ֆրանսիացիների համար: Այս տիպի բազմաթիվ օրինակներ կարելի է բերել վրացական իրականությունից ևս: Սոցիոմշակութային գիտելիքը միալեզու ուսուցման գործընթացում կարող է մնալ սովորողի ճանաչողության շրջանակներից դուրս, կամ կարծրատիպերի ազդեցությամբ ոչ ճիշտ տեղի ունենա սովորողի պատկերացման ձևավորում նրա մասին, ինչն, ի վերջո կհասցնի մինչև անհաջող սոցիալական հաղորդակցություն: Գրացուցադրման համար, ասենք, հյուրընկալության օրենքները կամ հեռախոսային հաղորդակցության սովորությունները տարբեր մշակույթներում: Եթե վրացական իրականության մեջ առանց հրավիրելու անսահման ժամանակով հյուր գնալը կամ ուշ ժամի հեռախոսազանգը սովորական երևույթ է, Արևմուտքի համար սա ընդունելի չէ: Բազմամշակույթ կրթությունն այս տիպի փորձ և առաջարկում է սովորողին: Հատուկ քննարկման առարկայի պետք է վերաժվի երկլեզու կրթության և ինտելեկտի փոխհարաբերության հարցը: Հայտնի է, որ լեզու սովորելը նույնաչափ մարզանք է ուղեղի համար, ինչպես սպորտը՝ մկանների համար: XX դարի սկզբին սկսվեց սուր բանավեճ, թե ինչպես է ազդում երկլեզու կրթությունը մարդու ինտելեկտի վրա: Գոյություն ունեցած հետազոտությունները, հիմնականում, վերաբերում են լեզվի և մտածողության փոխհարաբերության հարցին և առաջարկում են երկու տեսակետ.

1) յուրաքանչյուր լեզու անբաժանելիորեն կապված է մտածողության հետ, 2) մտածողությունն ինքնուրույն պրոցես է, իսկ խոսքը միայն միտքն արտահայտելու գաղտնագիր է: Գոյություն ունի փորձ, որը հավաստել է, որ երկլեզու կրթությունը չի նշանակում երկու լեզվով մտածել, փոխարենը այն հարստացնում է մայրենի լեզվով մտածելու կարողությունը:

(ВЕСТНИК ВолГМУ(15)

2005 81 3 УДК 378.1ВЛИЯНИЕ

БИЛИНГВАЛЬНОГО ОБРАЗОВАНИЯ НА РАЗВИТИЕ РАЗЛИЧНЫХ КОМПЕТЕНЦИЙ У СТУДЕНТОВ

О.Ф. Худобина, Кафедра иностранных языков с курсом латинского языка, ВолГМУ)

Բացի այդ, մեր կարծիքով, անձը, որը ստանում է երկլեզու կրթություն, հնարավորություն է ստանում համեմատելու և հանդիպադրելու միմյանց ուսանման առարկաների բովանդակությունը տարբեր կրթական մշակույթներում, ինչն, ի վերջո ծառայում է նրա ինտերմշակութային զարգացմանը:

Երկլեզու կրթությունը հոգեբանական և հուզական հարմարավետության զգացում է ստեղծում աշակերտների մոտ, բացի այդ, այն կարևոր է սոցիալական և մշակութային տեսակետից ևս: Ինչպես արդեն նշեցինք, այստեղ խիստ, հարկադրական քաղաքականությունը արդարացված չէ: Ընտանիքին, հասարակությանը պետք է առաջարկենք կրթության այլընտրանքային մոդելներ, բացատրենք նրանցից յուրաքանչյուրի ուժեղ և թույլ կողմերը, որպեսզի ի վերջո իրենք կայացնեն որոշում:

Իհարկե, գոյություն ունի վտանգ (այնպես, ինչպես միալեզու ավանդական կրթության պայմաններում), որ աշակերտի, ընտանիքի, հասարակության սպասումը չարդարանա, և երկլեզու կրթությունը չկարողանա բավարարել նրանց պահանջները: Ուզում ենք նշել, որ, ելնելով կրթության համալիր բնույթից, գոյություն ունի սրա հավանականություն, սակայն, կարծում ենք երկլեզու կրթության անհաջողությունը (այսպիսինի գոյության դեպքում), բխում է ոչ թե ինքնըստինքյան գաղափարի անհեռանկար լինելուց, այլ, հաճախ, առաջարկված ծրագրի ցածր որակից, հասարակության ոչ համապատասխան պատրաստակամությունից և/կամ ծրագիրն իրականացնողների (հեղինակ, մեմեջեր, ուսուցիչ) անպատրաստ լինելուց, ցածր իրազեկությունից: Այդ պատճառով է, որ երկլեզու կրթությունը պետք է քննարկենք, որպես թիմային

պատասխանատվության հարց, երբ թիմի բոլոր անդամները (աշակերտից մինչև ուսուցիչը) պատասխանատվության իրենց բաժինն ընդունում են մինչև վերջ:

Ժամանակակից աշխարհում ընթացող միգրացիոն, սոցիալական, քաղաքական գործընթացները մարդու առջև շատ նոր պահանջներ են ներկայացնում և նոր մարտահրավերներ առաջարկում: Մենք, կրթական համակարգի ներկայացուցիչներս, պետք է կարողանանք մարդկանց օգնել՝ գիտակցելու, որ «կրթությունն ամենահզոր զենքն է, որ կարող ես կիրառել տիեզերքը փոխելու համար» (Մահաթմա Գանդի): Երկլեզու կրթությունը մարդուն սովորեցնում է հարգել ինչպես սեփական, այնպես էլ տարբերվող մշակույթը: Այն մի գործիք է արդի աշխարհում՝ խաղաղ համագոյակցության համար:

Երկլեզու կրթության հետևանքով մարդը հավասարապես պետք է տիրապետի մայրենի լեզվին և մշակույթին: Նրա կրթության որակը պետք է բարձր լինի: Նա պետք է լինի անաչառ գնահատող և նաև տարբեր արժեքները, մշակութային առանձնահատկությունները և տարբերությունները գնահատող: Աշակերտը պետք է զինվի սոցիալական կարողություններով, որպեսզի հեշտությամբ պլանավորի իր կյանքը և հարմարվի իրավիճակներին և հասարակությանը: Երկլեզու կրթությունն անհատի հաջողությանը նպաստող միջոց է, և, եթե Մահաթմա Գանդիի խոսքերը փոխակերպենք՝ այսպիսի գիտելիքով զինված մարդն ունի հզոր զենք, որ ինքը դառնա տիեզերքը փոխող, ոչ թե ուղղակի գործընթացների վկա, այլ նրա անմիջական մասնակից:

ABSTRACT

K. Gochitashvili

Bilingual education – The instrument of grew multicultural person

The aim of the presented paper is to introduce the bilingual education, as the proper way to grew multicultural person. Also, there are described educational, cultural, social, (even political) tasks, bilingual education must be responded.

We are trying to present that bilingually educated person posses qualities and qualifications, which are essential for succes in the multikultural society.